ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/62

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ Շիրակի մարզի Գեղանիստի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ
Երրոդ անձ՝ «Բարվա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի,
«Բարվա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Եվ. Սուքիասյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՇՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցում, հակակարկտային կայանների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 12.07.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել թիվ «ՇՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. չեղարկելու/վերացնելու 25.06.2021թ.-ի թիվ 2 արձանագրությունը,
2. ընդունելու «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 12.07.2021թ.-ին:

13.07.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/62 համարի ծածկագիրը:

22.07.2021թ.-ին ներկայացված միջնորդության հիման վրա «Բարվա» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

22.07.2021թ.-ին և 30.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 22.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.07.2021թ.-ին:

2. «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն 12.07.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. ՀՀ Շիրակի մարզի Գեղանիստի համայնքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) իր կարիքների համար «ՀՀ Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի հակակարկտային կայանների ձեռք բերման և տեղակայման» ձեռքբերման նպատակով 09.06.2021 թվականին հրապարակել է թիվ «ՇՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/1» գնանշման հարցումը (այսուհետ՝ նաև Գնման ընթացակարգ):

1.2. Վերոհիշյալ գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ նաև Մասնակից), որը ընդունվել է Պատվիրատուի կողմից:

1.3. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.06.2021 թվականի թիվ 1 արձանագրությամբ կասեցրեց հայտերի բացման և գնահատման նիստը Կարգի 67-րդ կետի հիմքով «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված տվյալների իսկության ստուգման նպատակով:

1.4. Գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շրջանակում հայտերը գահատող հանձնաժողովը հայտերը բացելուց հետո թիվ 2 արձանագրությամբ 25.06.2021 թվականին արձանագրել է այն, որ Մասնակցի կողմից ներկայացված հայտի ծրարի վրա բացակայում է ծածկագիրը և այդ հիմքով որոշեց ընթացակարգը հայտարարել չկայացած:

Գնումների մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝

1. Մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

2. Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) մրցույթի ծածկագիրը.

3) ընթացակարգի ծածկագիրը .

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

4. Հայտերը քարտուղարը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով այդ մասին տրվում է տեղեկանք:

5. Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

6. (...):

Նույն օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում են՝

1) հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի անվանումը (անունը).

2) տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ.

3) տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

4) (...):

Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) (...):

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի համաձայն՝ Հայտերի բացման և գնահատման նիստում՝

1) նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման-հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք

ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված: Հանձնաժողովի քարտուղարը հաղորդում է տեղեկատվություն գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին (նիստը նախագահողին) փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

3) հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

5) (...):

Նշված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ մասնակցի կողմից գնման ընթացակարգի շրջանակում, եթե հայտը ներկայացվում է թղթային եղանակով, ապա այն պետք է ներկայացվի փակ ծրարով, որի վրա պետք է նշված լինի հետևյալ տվյալները՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) մրցույթի ծածկագիրը.

3) ընթացակարգի ծածկագիրը .

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

Վերոգրյալ ձևաչափը մասնակցի կողմից չպահպանելու դեպքում հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է այն և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին: Նշվածից հետևում է, որ օրենսդիրը մասնակցի համար

սահմանել է ինչպես հայտի ներկայացման դեպքում փակ ծրարի և դրա վրա նշվող տեղեկությունների պարտադիր վավերապայման, իսկ պատվիրատուի և/կամ գնահատող հանձնաժողովի համար սահմանել է հայտի մերժման և մասնակցի կողմից ներկայացված փակ ծրարը նույնությամբ ներկայացնողին վերադարձնելու և հայտը մերժելու պարտականություն, եթե ծրարի վրա առկա չէ օրենքով նախատեսված ամբողջ տեղեկատվությունը: Օրենսդրի կողմից նման պայմանի սահմանումը ինքնանպատակ չէ, այն ուղղված է սահամանփակելու գնման ընթացակարգի շրջանակում, ոչ իրավաչափ միջամտությունը, մրցակցային կանոնների սահմանումը և մինչ հայտերի բացումը յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված հայտի նույնականացումը: Ընդ որում նշվածը քննարկման առարկա պետք է դառնա մինչև հայտերի բացումը, որի վեաբերյալ արձանագրումը պետք է կատարվի հայտերի բացման և գնահատման արձանագրությամբ: Մասնակցի կողմից ներկայացված հայտի բացումը և ներկայացված փաստաթղթերի հրավերի պահանջների համապատասխանությունը պետք է հաջորդի երոգրյալին և այն բոլոր դեպքերում երբ բացվում է մասնակցի հայտը պետք է փաստել, որ մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմվել է Գնումների մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածին համապատասխան:

Ի դեպ պետք է արձանագրել նաև, որ մասնակցի կողմից ներկայացված հայտ բացելու պարագայում գնահատող հանձնաժառողովը ունեցել է բավարար հիմքեր որոշելու համար, թե՝ որ գնման ընթացակարգի շրջանակում է ներկայացված հայտը և այն բացելուց հետո բնականաբար, առկա է բավարար հիմնավորումներ այդ մասին, եթե հայտը կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Պետք է փաստել նաև, որ օրենսդիրը հայտերի բացման և գնահտման նիստում գնահատող հանձնաժողովին հայտերի բացումից հայտո մերժման լիազորություն է տվել միայն այն դեպքերում, երբ բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Ուստի գնահատող հանձնաժողովը իր լիազորությունների շրջանակով կաշկանդված է, եթե բացել է մասնակցի կողմից ներկայացված հայտը:

Յուրաքանչյուր գործողության համար օրեսդրի կողմից գնահատող հանձնաժողովին քայլերի հերթականություն մշակելը բխում է այն իրավաչափ պահանջից, որպեսզի օրինակ գնահատող հանձնաժողովի որոշումները չլինեն սուբյեկտիվ և հայտը բացելուց հետո, մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկին ծանոթանալուց հետո, որոշվի որոշակի պատճառներով մերժել նրա ներկայացրած հայտը, եթե առկա են այդպիսի

հիմքեր, ապա դրանց վերաբերյալ որոշումները պետք է կայացվեն օրենսդրի կողմից նման որոշում կայացնելու լիազորության ժամանկահատվածում, իսկ հայտերի բացումից հետո գնահատող հանձնաժողովը մասնակցի հայտը կարող է մերժել երկու դեպքում՝ 1-ին, երբ ներկայացված հայտում բացակայում է գնային առաջարկը և երկրորդ երբ Կարգի 41-րդ հոդվածի համաձայն արձանագրված է անհամապատասխանություն, որը մասնակցի կողմից չի շտկվել օրեքով սահմանված կարգով, հակառակ դեպքում գնահատող հանձնաժողովը չունի հայտ մերժելու լիազորություն և նրա կողմից կատարվող գործողությունները կլինեն ոչ իրավաչափ:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ, պետք է արձանագրել հետևյալը, որ գնահատող հանձնաժողովը 16.06.2021 թվականի թիվ 1 արձանագրային որոշմամբ «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊ ընկերության հայտը գնահատել է բավարար, ուստի արդեն իսկ փաստելով ներկայացված հայտի իրավաչափությունը և ձեռնամուխ է եղել Ընկերության կողմից ներկայացված տվյալների իսկության ստուգմանը, այն էլ Բարվա ՍՊԸ դիմումի հիման վրա, ամենայն հավանականությամբ արձանագրելով տվյալների համապատասխանությունը այլ ելք չի ունեցել «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊ ընկերությանը գնման ընթացակարգից դուրս թողնելու համար, որով պայմանավորված հիշել է, որ «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված ծրարի վրա բացակայում է մրցույթի ծածկագիրը, մոռանալով այն մասին, որ մինչ այդ գնահատել է «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊ ընկերության հայտը թիվ «ՇՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/1» գնման ընթացակարգի շրջանակում և գնահատել բավարար և 16.06.2021 թվականի թիվ 1 արձանագրության ուժի մեջ լինելու հիմքով պայմանավորված 25.06.2021 թվականին ընդունվել է ոչ իրավաչափ թիվ 2 արձանագրային որոշումը:

Ինչ վերաբերվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով գնման ընթացակարգը չկայացած ճանաչելուն առնվազն անտրամաբանական է, քանզի նշված իրավակարգավորումը գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու իրավասություն սահմանում է այն դեպքում, երբ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Եթե նույնիսկ դիտարկենք այն հանգամանքը, որ ծրարի վրա առկա չէ ընթացակարգի ծածկագիրը, ապա այս դեպքում ծրարը պետք է նույնությամբ վերադարձվեր այն ներկայացնողին, առանց բացելու, իսկ այն բացելուց հետո և բավարար գնահատելուց հետո, նշել, որ հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, չարձանագրել, թե՝ որ պահանջին չի համապատասխանում և չներկայացնել շտկման ու արդյունքում մերժել Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի

հիմքով, ապա պետք է փաստել, որ գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ: Եվ իվերջո հայտը, դա ոչ թե ծրարն է, այլ այդ նույն ծրարի մեջ դրված փաստաթղթերն են կազմում հայտ, իսկ ծրարը այն եղանակն է, որով ներկայացվում է հայտը: Ամփոփելով հայտնեմ, որ եթե նույնիսկ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը դիտարկում էր այն փաստը, որ հայտը չի համապատասխանուլում հրավերի պահանջներին, ապա պետք է Կարգի 41-րդ կետի հիմքով արձանագրեր անհամապատասխանությունը, մեկ աշխատանքային օրով կասեցներ հայտերի բացման և գնահատման նիստը, իսկ քարտուղարը ծանուցեր արձանագրված անհամապատասխանությունը շտկելու նպատակով, որի չշտկման դեպքում նոր միայն հանձնաժողովը կարող էր գտնահատել «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊ ընկերության հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու փաստը և գնման ընթացակարգը հայատարարել չկայացած:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել թիվ «ՇՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. չեղարկելու/վերացնելու 25.06.2021թ.-ի թիվ 2 արձանագրությունը,
2. ընդունելու «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու որոշում:

«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն 12.06.2020թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում քննվող թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021-57 ընթացակարգի շրջանակում 08.07.2021 թվականին հրավիրված բողոքի քննության ընթացքում երրորդ անձի ներկայացուցիչը անդրադառնալով Պատվիրատուի գործողություններին հայտնեց, որ թիվ «ՇՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/1» գնման ընթացակարգի շրջանակում (այսուհետ նաև Գնման ընթացակարգ) կնքված պայմանագիրը հրապարակվել է 01.07.2021 թվականին 09.30-ին իսկ բողոքի վերաբերյալ հայտարարությունը անց 10:

Հստակ ժամանակագրություն չնշելով, թե՞ անց տասը, որ անց 10-ին էր վերաբերվում կրկին անգամ փորձ էր կատարում խեղաթյուրել առկա փաստերը:

www.gnumner.am կայքում տեղադրված տեղեկատվությունից ակնհայտ է, որ գնման ընթացակարգի շրջանակում բողոքի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է 01.07.2021 թվականին 10:30, իսկ պայմանագիր կնքելու հայտարարությունը նույն օրեը 11:55-ին, որից ակնհայտ է, որ երրորդ անձի ներկայացուչի բանավոր դիրքորոշումներում հայտնած տեղեկությունները չեն համապատասխանում գործի փաստերին:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ կետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

Նշված իրավական նորմերի և սույն գործերի փաստերի վերլուծության համատեքստում ակնհայտ է, որ եթե գնման ընթացակարգը բողոքարկվել է, ապա այն՝ այդ թվում, անգործության ժամկետը կասեցված է, ուստի այդ ժամանակահատվածում կնքված պայմանագիրը առ ոչինչ է:

Գնահատող հանձնաժողովը բողոքարկված գնման ընթացակարգի շրջանակում գործել է ոչ իրավաչափ, որը վերաբերվում է նաև պայմանագրի կնքմանը և այս պահին հղում կատարել այն հանգամանքին, որ կնքվել է պայմանագիր, ակնհայտ անհիմն է, քանզի գործարքը առոչինչ է կնքման պահից և դրան հղում կատարել Պատվիրատուն չի կարող:

Նշվածը ապացուցվում է ինչպես այն հանգամանքով, որ պայմանագրի կնքման վերաբերյալ հայտարարությունը gnumner.am կայքում հրապարակվել է 1 ժամ 25 չոպե անց քան հրապարակվել է բողոքի վերաբերյալ հայտարարությունը և ավելին առավել քան վստահ եմ, որ պատվիրատուին ներկայացված հաստատված պայմանագրի նախագիծը ներկայացնելու գրությունը չի հաշվառվել պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում, որը ինքնին նույնպես կհանդիսանա բավարար ապացույց այն մասին, որ պայմանագիրը կնքվել է սույն գործով ներկայացված բողոքի հրապարակումից հետո:

Պայմանավորված վերոգրյալով խնդրում եմ սույն լրացումը քննության առնել հիմնական բողոքի հետ միասին, ինչպես նաև միջնորդում եմ պահանջել Պատվիրատուից ներկայացնելու թիվ «ՇՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/1» գնման ընթացակարգի շրջանակում

հաստատված պայմանագրի նախագիծը ներկայացնելու գրությունը պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում հաշվառված լինելու վերաբերյալ ապացույց:»:

3. <u>ՀՀ Շիրակի մարզի Գեղանիստի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 13.07.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/11310-2021 գրությամբ դիմել է ՀՀ Շիրակի մարզի Գեղանիստի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից 12.07.2021թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 15.07.2020թ.-ին թիվ Ե-21/187 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2021 թվականի հուլիսի 13-ի գրության հետ կապված «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի ներկայացված բողոքի հայտնում ենք հետևյալը /ըստ գործողությունների ժամանակացույցի/:

1. 08.06.2021թ.

Հայտարարվել է «ՀՀ Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի հակակարկտային կայանների» ձեռք բերման և տեղակայման նպատակով գնանշման հարցման մասին ՇՄԳՀ-ԳՀԼԼԾՁԲ-21/1 ծածկագրով հայտարարության հրավերը/ պատճենը կցվում է/:

2. 17.06.2021թ.

Ժամը 11-ին տեղի ունեցավ ՇՄԳՀ-ԳՀԱԾՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման գնահատման նիստ:

Նիստի ընթացքում «Բարվա» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչ Արման Վարդանյանի կողմից ներկայացվեց դիմում «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի փաթեթում փաստաթղթերի թերի լինելու վերաբերյալ/ դիմումի պատճենը կցվում է/:

Նիստի ավարտից հետո կազմվեց համապատասխան արձանագրություն /արձանագրություն թիվ 1 կցվում է/:

3. Հանձնաժողովի նիստից հետո նույնաբովանդակ գրություն է ներկայացրել Արմեն Մկրտչյանը/ պատճենը կցվում է/:

Տեղեկացնում ենք Ձեզ նաև այն մասին, որ ՀՀ Շիրակի մարզի Գեղանիստի համայնքապետարանի աշխատակազմը Հայաստանի Հանրապետությունում գործող

հայտնի իրավասու կազմակերպություններին հղել է պաշտոնական նամակներ պարզելու համար «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի ISO9001:2008 հավաստագրի ունենալու փաստը /ՀՀ Ստանդարտացման և Չափագիտության ազգային մարմին, «Սերտիֆիկացում և Որակ» ՍՊԸ, «Նարեկ» գիտահետազոտական ՓԲԸ /պատճենները կցվում են/:

«Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ISO9001:2008 հավաստագրի իսկությունը ստուգելու համար 23.06.2021թ. հարցում է հղվել էլեկտրոնային հասցեին 24.06.2021թ. /պատճենները կցվում են/: Համայնքապետարանի աշխատակազմը ուսումնասիրելով հավաստագիր տրամադրելու ընթացակարգը և կազմակերպությունների բազմաքանակ լինելը, ինչպես նաև այլ պետություններից ևս հավաստագիր ստանալու փաստը՝ նպատակահարմար գտավ դադարեցնել ISO9001:2008 հավաստագրերի առկայության հարցումների գործընթացը, և մասնակիցներից պահանջեց հավաստագրերի բնօրինակները ներկայացնել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների ընթացքում: /Չի կազմվել որևէ արձանագրություն, խոսակցությունները եղել են հեռախոսային և երես առ երես ձևաչափով/:

4. 24.06.2021թ.

«Բարվա» ՍՊԸ-ի տնօրեն Ն. Վարդանյանին և «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Հակոբյանին ուղարկվել է ծանուցում ՇՄԳՀ-ԳՀԱԾՁԲ-21/1 ծածկագրով գնման գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների հրավերի, տեղի և ժամանակի վերաբերյալ /ծանուցման պատճենը կցվում է/:

5. 25.06.2021թ.

Ժամը 11:00-ին ՀՀ Շիրակի մարզի Գեղանիստի համայնքապետարանի վարչական շենքում /հասցե՝ Շիրակի մարզ, գ. Գեղանիստ 8-րդ փողոց, 1/ տեղի ունեցավ ՇՄԳՀ-ԳՀԱԾՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների նիստը, նիստի ներկա էր «Բարվա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արման Վարդանյանը, իսկ «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի կողմից հեռախոսով տեղեկացրել էին, որ իրենք չեն մասնակցի նիստին:

6. Նիստի ընթացքում հանձնաժողովը իրականացրեց մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը նախատեսված պահանջներին: Պարզվեց, որ առաջին նիստի ընթացքում հանձնաժողովի ուշադրությունից վրիպել է ծրարների կազմումը, մասնավորապես՝

«Բարվա» ՍՊԸ-ի ծրարի վրա բացակայում է կազմակերպության անվանումը, իսկ «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի ծրարաի վրա բացակայում է մրցույթի ծածկագիրը:

Հաշվի առնելով վերոհիշյալ բացթողումները և երկու կողմի ISO9001:2008 հավաստագրի բնօրինակների չներկայացնելը հանձնաժողովը որոշեց գնումների ընթացակարգը համարել չկայացած, և կազմվեց համապատասխան արձանագրություն/ Արձանագրություն թիվ 2-ի պատճենը կցվում է/:

Արձանագրությունն ուղարկվել է ՀՀ Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղարին հաստատման և հրապարակման համար /Պաշտոնական գրությունը կցվում է/:

7. 13.07.2021թ.

ՀՀ Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղարին հղվել է պաշտոնական գրություն «ՀՀ Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի հակակարկտային կայանների» ձեռք բերման և տեղակայման գնանշման հարցման մասին հայտարարության և հրավերի փոփոխված տարբերակը գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակելու համար:/ նամակի պատճենը կցվում է/:

Դրանից հետո ստացել ենք Ձեր նամակը և բանավոր տեղեկացրել ՀՀ Շիրակի մարզպետարան կասեցնելու գնման գործընթացի էլեկտրոնային տեղեկատուում հրապարակելը՝ մինչև բողոքարկման վերաբերյալ որոշման կայացումը:»:

4. Երրորդ անձ՝ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ «ՇՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Բարվա» ՍՊԸ-ն 22.07.2021թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը, լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին և իր առարկություններն է հայտնել ներկայացված բողոքի հիմքերի ու հիմնավորումների վերաբերյալ:

5. ԳԲՔԱ-LO-2021/62 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Շիրակի մարզի Գեղանիստի համայնքապետարանի կողմից հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով 09.06.2021թ.-ին հայտարարվել է «ՇՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Բիզնես Էլիտա» ՍՊ և «Բարվա» ՍՊ ընկերությունները:

ii. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 3.1-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և երկու օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները: Ծրարը և սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Հրավերի՝ 3.2-րդ կետի համաձայն՝ սույն հրահանգի 3.1-րդ կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) ընթացակարգի ծածկագիրը.

3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

Հրավերի 3.3-րդ կետի համաձայն՝ սույն հրահանգի 3.1-րդ և 3.2-րդ կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

iii. Ընթացակարգի գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Արմեն Մկրտչյանը՝ 17.06.2021թ.-ին ժամը 10:50-ին ներկայացրել է հայտ՝ փակ ծրարով:

iv. Ծրարի վրա «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի հայտը կազմելու լեզվով չի նշվել ընթացակարգի ծածկագիրը:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 17.06.2021թ.-ի նիստի թիվ 1 արձանագրության համաձայն՝ մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են հրավերի պահանջներին համապատասխայն /Հանձնաժողովի կողմից դիտարկվել են որպես պիտանի ներկայացված հայտեր/:

vi. Հանձնաժողովի 25.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ մինչև բանակցային գործընթացի մեկնարկը իրականացվեց մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ինչի արդյունքում պարզվեց, որ երկու մասնակիցների ծրարների կազմումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ «Բարվա» ՍՊԸ-ի ծրարի վրա բացակայում է կազմակերպության անվանումը, իսկ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի ծրարի վրա բացակայում է մրցույթի ծածկագիրը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից 12.07.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի.

1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

2-րդ մասի համաձայն՝ փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ,

3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 2-րդ մասում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) մրցույթի ծածկագիրը.

3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը,

4-րդ մասի համաձայն՝ հայտերը քարտուղարը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով այդ մասին տրվում է տեղեկանք:

5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Ընթացակարգի հրավերի 3.2-րդ կետի համաձայն՝ սույն հրահանգի 3.1-րդ կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) ընթացակարգի ծածկագիրը.

3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

Հրավերի 3.3-րդ կետի համաձայն՝ սույն հրահանգի 3.1-րդ և 3.2-րդ կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Վերոնշյալ հոդվածների համալիր վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով, որը ներառում է մասնակցի կողմից հաստատած՝ հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություն, գնային առաջարկ, տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր և հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր:

Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ: Ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն), մրցույթի ծածկագիրը, «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից՝ դրանց վրա գրելով «բնօրինակ» և «պատճեն» բառերը, որը ստորագրում է ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը:

Ներկայացված հայտերը քարտուղարը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը, իսկ վերը նշված պայմաններին և պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Գեղանիստի համայնքապետարանի կողմից հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով 09.06.2021թ.-ին հայտարարված «ՇՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Արմեն Մկրտչյանը՝ 17.06.2021թ.-ին ժամը 10:50-ին ներկայացրել է հայտ՝ փակ ծրարով, սակայն ծրավերի վրա «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի հայտը կազմելու լեզվով չի նշվել ընթացակարգի ծածկագիրը: Հանձնաժողովի 17.06.2021թ.-ի նիստի թիվ 1 արձանագրությամբ արձանագրվել է, որ մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են հրավերի պահանջներին համապատասխայն /Հանձնաժողովի կողմից դիտարկվել են որպես պիտանի ներկայացված հայտեր/: Սակայն Հանձնաժողովի 25.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ մինչև բանակցային գործընթացի մեկնարկը իրականացվել է մասնակիցների կողմից ներկայացված

փաստաթղթերի համապատասխանությունը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ինչի արդյունքում պարզվել է, որ երկու մասնակիցների ծրարների կազմումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ «Բարվա» ՍՊԸ-ի ծրարի վրա բացակայել է կազմակերպության անվանումը, իսկ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի ծրարի վրա բացակայել է մրցույթի ծածկագիրը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Վերոնշյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ Շիրակի մարզի Գեղանիստի համայնքապետարանի կողմից հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով 09.06.2021թ.-ին հայտարարված «ՇՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Արմեն Մկրտչյանը՝ 17.06.2021թ.-ին ժամը 10:50-ին ներկայացրել է հայտ՝ փակ ծրարով, որի վրա նշված է եղել պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն), մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը, «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, սակայն չի չնշվել ընթացակարգի ծածկագիրը, ինչով պայմանավորված թույլ է տրվել Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ ենթակետի և Հրավերի 3.2-րդ կետով սահմանված պահանջների խախտում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ծրարի վրա ընթացակարգի ծածկագրի նշման պարտադիր պայմանն ինքնանպատակ չէ և միտված է ապահովելու գնումների և գնումների գործընթացի պատշաճ իրականացմանը:

Միաժամանակ, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովը հայտերի բացման նիստում պարտավոր էր «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում (հայտում) արձանագրեր հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն և մերժեր վերջինիս հայտը, ինչի արդյուքում՝ այդ անհամապատասխանությունները հայտերի բացման նիստում չարձանագրելու պատճառով թույլ է տրվել Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով և Հրավերի 3.3-րդ կետով սահմանված պահանջների խախտում, սակայն վերոնշյալ խախտումն չի կարող հանգեցնել Ընկերության կողմից ներկայացված բողոքի բավարարման, այն պարզ փաստի հաշվառմամբ, որ Հանձնաժողովն ամեն դեպքում հայտերի վերագնահատման արդյունքում արձնագրել է Ընկերության կողմից ներկայացված անհամապատասխանությունը և կայացրել է վերջինիս

հայտը մերժելու մասին իրավաչափ որոշում՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ թիվ «ՇՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումն իրավաչափ է և չի հակասում Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ ենթակետի և Հրավերի 3.2-րդ կետով սահմանված պահանջներին՝ որպիսի պայմաններում Պատվիրատուի կողմից ապահովվել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից 12.07.2021թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/62 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**